

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Հայրենագիտություն
4-5-րդ դասարան

«Հայրենագիտությունը» ներառում է «Դիցաբանություն», «Պատմություն» դասընթացները, կազմակերպվում ուսումնական ճամփորդությունների, բանահավաքչության, ուսումնական այլ նախագծերի ձևով: «Դիցաբանությունը» ընդգրկում է «Հին հայկական առասպելներ», «Սասնա ծռեր» էպոսը, «Հունական դիցաբանություն», «Դիցաբանությունը երկնքում» ուսումնական մոդուլները:

Հայրենագիտություն առարկան չի ճանաչում «սահմաններ» և սովորողների համար գրավիչ ուսումնական միջավայր է՝ հայրենիքը ճանաչելու, մանրամասն ուսումնասիրելու համար: Դասընթացի կարգախոսն է. «Ծիպուկ-ծիպուկ ուսումնասիրենք և ճանաչենք մեր հայրենի ամեն մի փոքրիկ անկյուն»:

Հայրենագիտություն առարկայի դասավանդման գլխավոր **նպատակն** է սովորողին դարձնել **հայրենաճանաչ**:

Ըստ մեր ուսումնական պլանի, ինչպես նաև հայրենագիտություն առարկան սովորողին ավելի շոշափելու ու հասանելի դարձնելու համար, հայրենագիտության առարկայի անբաժանելի մասն են կազմում տարբեր բնույթի ուսումնա-հայրենագիտական ճամփորդությունները, ինչպես քաղաքում՝ թանգարաններ, Երևան քաղաքի այլ վայրեր, այնպես էլ 1-օրյա և բազմօրյա արշավներ՝ Երևան քաղաքից դուրս:

Սովորողները հետազոտում են իրենց թաղամասը, քաղաքը, գյուղը, երկիրը, բացահայտում տվյալ տարածքի անվան (անունների) ծագումնաբանությունը, բնորոշ գծերը (բարբառ, արդի էկոլոգիական խնդիրները, ավանդապատումներ, աշխարհագրական դիրք, պատմական ակնարկ, բնակչություն և այլն):

Սովորողներն իրենց ընտրությամբ կատարում են նաև ուսումնա-հետազոտական այլ աշխատանք՝ բանահավաքչություն (բնակավայրի, լեռների, լճերի, գետերի տեղանունների ծագման հետ կապված զրույցների-ավանդությունների, ավանադական կերակրատեսակների բաղադրատոմսեր, ծեսերի նկարագրություն և այլն), էկոլոգիական (բնակավայրերի բնապահպանական խնդիրներին առնչվող թեմաների ուսումնասիրում):

Գնահատում - Սովորողները գնահատվում են ստուգարքային տարբերակով՝ ըստ իրենց կատարած աշխատանքի: Յուրաքանչյուր թեմա ամփոփելիս ներկայացնում են թեմային վերաբերող նախագիծ էլեկտրոնային եղանակով կամ տրվում է թեստային աշխատանք: Կարևորվում է մասնակցությունը ուսումնա-հայրենագիտական ճամփորդություններին մասնակցությունը և դրանց անդրադարձը: Խրախուսվում է ուսումնա-հասարակական նախագծերի մասնակցությունը և գիտելիքների գործնական կիրառությունը:
4-5-րդ դասարանն ավարտող սովորողը պետք է կարողանա՝

1. կողմնորոշվել տեղանքում կողմնացույցի և առանց կողմնացույցի՝ բնության տարրերով
2. հաղթահարի իր տարիքին համապատասխան բարձունքներ
3. հայրենագիտորեն ճանաչի իր շրջապատը՝ գյուղը, քաղաքը, դպրոցը, բակը...
4. Ճանաչի հին հայկական դիցաբանական հերոսներին և աստվածներին
5. հայրենագիտորեն արշավել
6. կարողանա պատրաստել հետաքրքիր ուսումնական-ճանաչողական տեսաֆիլմեր հայրենիքի մասին
7. ինքնուրույն ստեղծագործական, ընտանեկան, հայրենագիտական հետազոտություններ նախագծեր կատարել՝ ընտանեկան հայրենագիտություն